ԿԱՐԾԻՔ

Վեներա Հովիկի Ավետիսյանի՝ «Էթնոմշակութային դիսկուրսը Գոհար Մարկոսյան-Կասպերի ստեղծագործությունում» թեմայով Ժ.01.03 «Ռուս գրականություն» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին:

Վ. Հ. Ավետիսյանի ատենախոսությունն արդիական թեմայով ավարտուն գիտական հետազոտություն է, որն ունի տեսական, գիտամեթոդական և գործնական կիրառման կարևոր նշանակություն: Ատենախոսությունը նվիրված է ռուսալեզու հայազգի գրող Գոհար Մարկոսյան-Կասպերի ստեղծագործությունում էթնոմշակութային տարրերի ուսումնասիրությանը:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից և մատենագիտական գրականության ցանկից: Ներածության մեջ մանրամասնորեն հիմնավորված են հետազոտության արդիականությունը և գիտական նորույթը:

Առաջին գլխում, որը կոչվում է «Էթնոմշակութային դիսկուրսը ժամանակակից ռուս գրականությունում», ատենախոսն անդրադառնում է ռուսալեզու հայ գրողների ստեղծագործություններում էթնոմշակութային մտածելակերպի դրսևորման առանձնահատկություններին, ներկայացնում է գրականագիտության մեջ առկա գեղարվեստական ստեղծագործությունների՝ ռուսալեզու գրականությանը դասակարգելու չափանիշները, ուսումնասիրում է այս երևույթի սահմանման հիմնական մոտեցումները:

Երկրորդ գլխում, որը կոչվում է՝ «Գոհար Մարկոսյան-Կասպերի «Պենելոպե» վեպը ռուսական պոստմոդեռնիստական գրականության առաջին փուլի համատեքստում», հետազոտվում է ռուսական պոստմոդեռնիստական գրականության հիմնական հասկացությունների արտացոլումը Գ. Մարկոսան-Կասպերի ստեղծագործությունում, ուսումնասիրվում են գեղարվեստական ճանապարհորդության, հեգնանքի, պարոդիայի և «հակահեգնանքի» կողը գրողի արձակում, բացահայտվում և վերլուծվում են հղումները ռուս և եվրոպական գրականությանը:

Ատենախոսությունը եզրափակող երրորդ գլուխը, որը կոչվում է «Էթնոմշակութային դիսկուրսի իրականացման ձևերն ու մեթոդները Գ. Մարկոսյան-Կասպերի ստեղծագարծությունում» նվիրված է «անտիկ ցիկլի» վեպերում միջմշակութային փոխգործակցության վերլուծությանը, անդրադարձ է կատարվում «Պենելոպե» վեպում կենցաղի բանաստեղծականացմանը, անտիկ դիսկուրսի դրսևորման առանձնահատկություններին, դիտարկվում և վերլուծվում են գենդերային խնդիրները, ինչպես նաև առասպելի վերաիմաստավորումը գրողի ստեղծագործություններում:

Եզրակացության մեջ ներկայացվում են ատենախոսության ընդհանուր եզրահանգումները:

Վ. Ավետիսյանը հավաքել և վերլուծել է մեծ չափով գրականագիտական նյութ, բազմակողմանի և մանրազնին կերպով ուսումնասիրել է Մարկոսյան-Կասպերի գլխավոր՝ «Պենելոպե» վեպը, որի հիման վրա արտահայտվում են Մարկոսյան-Կասպերի ստեղծագործության հիմնական առանձնահատկությունները՝ միջտեքստային կապերը, հղումները, ինչպես նաև պատումային առանձնահատկությանը վերաբերող տարրերը:

Ատենախոսի ուշադրությունից չի վրիպել նաև Մարկոսյան-Կասպերի ստեղծագործություններում գենդերային դիսկուրի դրսևորման առանձնահատկությունները՝ ժամանակակից գիտական մտքի համատեքստում: Ատենախոսը արդյունավետ կերպով կիրառում է վերլուծության ժամանակակից՝ մասնավորապես գենդերային վերլուծության, ֆեմինիստական քննադատության մեթոդները, որի շրջանակներում համոզիչ կերպով ցույց է տալիս վեպի մոդեռնիստական և պոստմոդեռնիստական ելակետերը:

Աշխատանքի արժանիքների թվում նշենք նաև ատենախոսության հիմական դրույթների շարադրումը ըստ կոնկրետ դասակարգման՝ կոնցեպտուալ և գեղարվեստական բաղադրիչներ, պատումային ձևի առանձնահատկություններ, գենդերային դիսկուրսի պատկերման առանձնահատկություններ, ինչը թույլ է տալիս համապարփակ պատկերացում կազմել Մարկոսյան-Կասպերի բարդ և բազմակողմանի ստեղծագործության վերաբերյալ: Ընդհանուր առմամբ մեր առջև բարձրորակ գրականագիտական ուսումնասիրություն է:

Որպես դիտողություն նշենք հետևյալը.

1. Ատենախոսության վերնագրի ձևակերպումը չի հստակեցնում նշված թեմայի և հետազոտության ուղղության ընդգրկումը: Անվանման մեջ նպատակահարմար կլիներ հստակեցնել էթնոմշակութային դիսկուրսի ընդգրկման սահմանները, օրինակ՝ էթնոմշակութային դիսկուրսի «ինքնատիպություն» կամ «առանձնահատկություններ» ձևակերպումներով, քանի որ ատենախոսը հիմնավորում է ուսումնասիրության եզրակացությունները՝ դրանք սահմանելով հենց որպես էթնոմշակութային դիսկուրսի «ինքնատիպություն» ուսումնասիրվող հեղինակի ստեղծագործության մեջ:

2. Բորիս Վիանի «Օրերի փրփուրը» վեպի ընտրության հիմնավորումը «Պենելոպե» վեպում միջտեքստային կապերի բացահայտման համար բավականաչափ համոզիչ չէ: Մարկոսյան-Կասպերի ստեղծագործությունն աչքի է ընկնում հարուստ միջտեքստային կապերով և համաշխարհային գրականության գործերին ամենատարբեր հղումներով: Նրա ստեղծագործություններում բազմիցս հանդիպում են տարբեր գրողների և նրանց ստեղծագործությունների հերոսների անուններ:

Բ. Վիանի ստեղծագործությունը չի համընկնում Մարկոսյան-Կասպերի գործունեության ժամանակաշրջանի հետ ո՛չ ժամանակագրական առումով, ո՛չ գրական ուղղություններով: Ատենախոսի կողմից բնորոշված՝ Բ. Վիանից դեպի Գ. Մարկոսյան-Կասպեր տանող բավական լուրջ գծի՝ «40-ականների աբսուրդիստական թատրոնի տարրերով ֆրանսիական ավանգարդից դեպի հետսովետական՝ սակայն անտիկ մշակույթին հարող սյուժե» վերլուծության առարկան ներկայացված է հենց որպես «արձագանքներ»՝ հիմնված երկու վեպերի «ինտոնացիոն մերձավորության» վրա: Բ. Վիանի «Օրերի փրփուրը» և Մարկոսյան-Կասպեր «Պենելոպա» վեպերի միջտեքստային կապերի ուսումնասիրության վերաբերյալ եզրակացությունները ներկայացվում են բավականին հպանցիկ:

3. Ատենախոսությունը լի է ժամանակակից, երբեմն՝ բացառապես նորագույն շրջանի եզրութաբանական համադրություններով: Ավելի ցանկալի կլիներ, եթե ատենախոսը նշեր այդ եզրույթների աղբյուրները կամ հեղինակներին՝ գիտական շրջանառության մեջ դրանց ճշգրիտ սահմանումը հիմնավորելու համար:

Ընդհանուր առմամբ՝ այս գիտական աշխատանքը համապատասխանում է ներկայացված պահանջներին, իսկ ատենախոսն արժանի է բանասիրական գիտությունների թեկնածուի կոչմանը՝ «Ռուս գրականություն» մասնագիտությամբ:

Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Ա. Հ. Չուլյան